ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանին

ՀՀ քաղաքացի Մակեդոն Ալեքսանյանից
հասցե՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյանի 14, բն. 5

Դիմում

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության ընդունած վարչական ակտերով թույլատրվել է շահագործել Ջերմուկ քաղաքին հարակից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ազդակիր համայնք է համարվում շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա մարզի (մարզերի), համայնքի (համայնքների) բնակչությունը: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն լիազոր պետական մարմնի (ՀՀ բնապահպանության նախարարության) պարտավոր է նախատեսվող գործունեության վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ազդակիր համայնքի ղեկավարներին իրազեկ պահել նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին:

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է.Փիրումյանի կողմից ստացված գրության համաձայն՝ «... Ջերմուկ քաղաքն ազդակիր համայնք չանաչելու եւ այնտեղ հասարակական լսումներ անցկացնելու ժամկետներն արդեն անցել են»: Այսպիսով, Ջերմուկ համայնքը չի ճանաչվել որպես հանքավայրի շահագործման նախագծի ազդակիր համայնք եւ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ իրավունքներով չի մասնակցել հասարակական լսումներին:

Հաշվի առնելով սույն դիմումում ներկայացված փաստերը՝ խնդրում եմ Մարտունի քաղաքը ճանաչել որպես «ՀՀ Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման» նախագծի համար ազդակիր համայնք:

Մակեդոն Ալեքսանյան

12.12.2012թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РА
ГНО "ПРИРОДООХРАННАЯ ЭКСПЕРТИЗА"
MINISTRY OF NATURE PROTECTION OF RA
"ENVIRONMENTAL EXPERTISE" SNCO

• 375012, Երևան, Կոմիտաս 29,
• 375012 г. Ереван, пр. Комитаса 29,
• 29 Komitas Ave., Yerevan, 375012

Հեռ. (374 1)220-218
Тел. (374 1) 220-218
Tel (374 1) 220-218

ԱԳ 33/605

«28» 12 2012թ.

ՀՀ քաղաքացի
պարոն Մակեդոն Ալեքսանյանին
/ք. Ջերմուկ, Մյասնիկյան 14, բն. 5/

Հարգելի պարոն Ալեքսանյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր 14.12.12թ դիմումի՝ կապված <<Գեոթիմ>> ՓԲԸ-ի ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի հետ, հայտնում եմ որ 31.07.12թ նշված նախագծին տրվել է դրական բնապահպանական փորձաքննական եզրակացություն /ԲՓ-65/:

Ազդակիր համայնքների ընտրությունը, ինչպես նաև նախատեսվող գործունեությունների մասին ծանուցումները կանոնակարգվում են <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ամուլսարի հանքավայրի դեպքում այն իրականացվել է վաղուց:

Ուստի Ջերմուկ քաղաքը ևս ազդակիր համայնք ճանաչելը, վերոնշյալ պատճառներով պայմանավորված, հնարավոր չէ:

Միաժամանակ հայտնում եմ, որ Ամուլսարի հանքավայրի նախագծային փաստաթղթերի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով 08.05.2012թ ԱԳ-33/208, իսկ մասնագիտական եզրակացության վերաբերյալ հասարակական լսումներին մասնակցելու նպատակով 23.07.2012թ ԱԳ-33/343 գրություններով, <<Բնապահպանական փորձաքննություն>> ՊՈԱԿ-ը դիմել է Ջերմուկի քաղաքապետարանին, որտեղից առայսօր որևէ պատասխան չի ստացվել:

Տնօրեն՝ Ա. Գևորգյան

Հ. Գրիգորյան
22-14-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

19.12.12թ. N 04/14.2/5246-12

Ձեր N _____ առ _____

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
պրն Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մա՛նուկյան

Ի պատասխան Ձեր 2012 թ. դեկտեմբերի 3-ի N ՀԱԿ-113-Ե-003 գրության՝ կից ներկայացնում ենք նախարարության ենթակայության <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տրամադրած տեղեկույթը Ձեր հարցադրումների վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՊՈԱԿ-ի կողմից 2012 թ.-ին ներկայացված 224 նորահայտ օբյեկտների ցուցակում ընդգրկված ՀՀ Վայոց ձորի մարզի Կեչուտ, Գնդեվազ և Սյունիքի մարզի Գորայք համայնքների վարչական սահմաններում գտնվող 4 հնագիտական օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու հարցը քննարկվել է ՀՀ մշակույթի նախարարության փորձագիտական հանձնաժողովի 2012 թ. նոյեմբերի 23-ի N 2 նիստում, որտեղ նախնական դրական եզրակացություն է տրվել նորահայտ հուշարձանների ցուցակում դրանք ներառելու առաջարկությանը:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՊՄՀՊ գործակալություն
Կատ.՝ Ռ. Հովհաննիսյան
Հեռ.՝ 565118

5-1734
20 12 12

ՀՀ, Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 տուն
(37410) 523922, fax(37410) 523922 E-mail:info@mincult.am

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF CULTURE
"SCIENTIFIC RESEARCH CENTER
OF THE HISTORICAL AND
CULTURAL HERITAGE" SN-CO

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
"НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ
ЦЕНТР ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО
НАСЛЕДИЯ" ГНКО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Փավստոս Բուզանդի 1/3, Երևան, 375010, Հեռ. (37410) 52-66-18
1/3 P.BUSAND , Yerevan, 375010, Tel. (37410) 52-66-18
375010,Ереван, ул. П. Бузанда 1/3, Тел. (37410) 52-66-18
Ֆաքս (Fax) (37410) 52-87-97

«12» դեկտեմբեր 2012 թ.

01/250

ՀՀ Մշակույթի նախարարաի տեղակալ
պարոն Ա. Պողոսյանին

Հարգելի պրն. Պողոսյան

Ի պատասխան Ձեր № 05/14.2/ 5038-12 05 դեկտեմբերի և 05/14-5/5114-12 07 դեկտեմբերի գրությունների ներկայացնում եմ հետևյալ տեղեկատվությունը.

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի տարածքում մեր կազմակերպության արշավախումբը հայտնաբերել, ուսումնասիրվել և հաշվառել է ՝ բնակատեղիներ, դամբարանադաշտեր և մահմեդական մեկ գերեզմանոց: Կից ներկայացվում է ցանկը: Նշված արժեքները ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարություն՝ դրանք միջգերատեսչական հանձնաժողովում քննարկելու և հուշարձանի կարգավիճակ տալու համար:
2. Պահպանական գոտիների վերաբերյալ հայտնում ենք, որ նախագծվել և թողարկվել է երկու պահպանական գոտի, Վայոց ձորի մարզի Կեչուտ համայքում՝ «Վերին և Ներքին Ջիրակ» գյուղատեղիները, որոնք 2010 թ. ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարություն՝ հաստատման համար (9.2.1-4, 9.2.1-6) :
3. «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-Ը Ամուլսարի տարածքում հնէաբանական պեղումներ չի կատարել: Որքանով մենք տեղյակ ենք, այլ կազմակերպություններ նույնպես վերջին տասնամյակում ՀՀ տարածքում հնէաբանական պեղումներ չեն իրականացրել: Եթե պարոն Մանուկյանը նկատի ունի հնագիտական պեղումները, ապա տեղեկացնում ենք, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի տարածքում ԳԵՈՓԻՄ ՓԲԸ-ի առաջարկով մեր կազմակերպությունը կատարել է հետախուզական աշխատանքներ: Դրանց արդյունքում հայտնաբերվել են առանձին դամբարաններ և դամբարանադաշտեր,

որոնք գտնվում են շահագործվող բաց հանքի տարածքից դուրս: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ եթե հեռանկարում հուշարձանների տարածքները ներառվեն հանքաարդյունաբերության շահագործման գոտում, ապա, ԳԵՈԹԻՄ ՓԲԸ նախօրոք պետք է ֆինանսավորի վտանգված հուշարձանների պեղումները:

4. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի տարածքում իրականացվել են հետախուզական աշխատանքներ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ԳԵՈԹԻՄ ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ:
5. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի տարածքում հետախուզման արդյունքում հայտնաբերվել են՝ վանակատե գործիքներ, միջուկներ և ցլեպներ, ինչպես նաև ուշ բրոնզեդարյան - վաղ երկաթեդարյան և ուշ միջնադարյան հասարակ խեցեղենի բեկորներ: Հայտնաբերված բոլոր գտածոները այժմ մեր կազմակերպության հնագիտական լաբորատորիայում են: Դրանք գտնվում են վերականգնման, նշագրման, ցուցակագրման և ուսումնասիրման փուլում: Ուսումնասիրման աշխատանքներից հետո բոլոր գտածոները կհանձնվեն համապատասխան թանգարան
6. Ինչ կապված է ֆինանսական հաշվետվություն պեղումներ իրականացնելու վերաբերյալ հարցին, ապա տեղեկացնում ենք, որ նշված տարածքում կատարվել են լոկ հետախուզական աշխատանքներ՝ հուշարձաններ հայտնաբերելու նպատակով:

Հարգանքով՝

Տնօրեն Հ. Սիմոնյան

Ցուցակ Ամուլսարի տարածքի այն հուշարձանների, որոնք ընդգրկված չեն Սյունիքի և Վայոց ձորի մարզերի պետական ցուցակներում և ներկայացվել են նորահայտ օբյեկտների 6-րդ (2011 թ.) և 7-րդ (2012 թ.) լրացուցիչ ցուցակներում

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ մարզ

9.2.1 ԿԵՉՈՒՏ գյուղ

Ընդհանուր համար	Հուշարձանի անվանումը (ըստ ելակետային փաստաթղթի)	Ժամանակը (ըստ ելակետային փաստաթղթի)	Հուշարձանի տեղը, հասցեն (ըստ ելակետային փաստաթղթի)	Արժեկորումը՝ տեղական / հանրապետական	Ծանոթագրություն (մարզի ցուցակի և ելակետային փաստաթղթերի այլ տվյալներ)
1	2	3	4	5	6
1	Գերեզմանոց	11-17 դդ.	«Ներքին Ձիրակ» գյուղատեղիում, քարհանք տանող ճանապարհի ձախ կողմում, վարելահողերով շրջապատված տարածքում	Հ	6-րդ լր.՝ 4.1
2	Խաչքար	11-12 դդ.	«Ներքին Ձիրակ» գյուղատեղիի գերեզմանոցում կանգնեցված	Հ	6-րդ լր.՝ 4.1.1
3	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 3-1 հազ.	գյուղից մոտ 10 կմ հվ-աե, Ամուլսարի հս ստորոտին, Որոտան գետի աջ ափին բարձրացող բլրաշղթայի հարթ մասում, Ջերմուկ-Գորայք դաշտամիջյան ճանապարհի երկու կողմում, ջրերի բաշխիչ կայանի և Իրան-Հայաստան գազամուղի մոտ	Հ	6-րդ լր.՝ 16 19-20 դդ. տարածքում կատարվել են ազերիների թաղումներ
4	ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից մոտ 11 կմ աե, Որոտան գետի աջ ափին, կամրջից 150-200 մ հս, բլրի հարթ գագաթին, լանջերին և ստորոտին, Ջերմուկ-Գորայք դաշտամիջյան ճանապարհից ձախ		7-րդ լր.՝ 20 հայտնաբերվել է 2011 թ. ամռանը

9.16 ԳՆԴԵՎԱՋ գյուղ

1	2	3	4	5	6
1	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 18 կմ աե, Ամուլսարի էրատո լեռնագագաթի աե և հս-աե ստորոտին	Հ	7-րդ լր.՝ 16 հայտնաբերվել է 2011 թ. ամռանը
2	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 21 կմ հս-աե, Ամուլսարի Հյուսիսային էրատո լեռնագագաթի ամ ստորոտին	Հ	7-րդ լր.՝ 17 հայտնաբերվել է 2011 թ. ամռանը
3	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 23 կմ հս-աե, Ամուլսարի Արտավազդ և Տիգրան	Հ	7-րդ լր.՝ 18

			լեռնագագաթների միջակայքում		հայտնաբերվել է 2011 թ. ամռանը

ՍՅՈՒՆԻՔԻ մարզ

8.28 ԳՈՐԱՅՔ ԳՅՈՒՂ

Ընդհանուր համար	Հուշարձանի անվանումը (ըստ ելակետային փաստաթղթի)	Ժամանակը (ըստ ելակետային փաստաթղթի)	Հուշարձանի տեղը, հասցեն (ըստ ելակետային փաստաթղթի)	Արժեկորումը՝ տեղական / հանրապետական	Ծանոթագրություն (ելակետային փաստաթղթերի այլ տվյալներ)
1	2	3	4	5	6
1	ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 3-1 հազ., Ք.հ. 12-18 դդ.	գյուղից մոտ 21 կմ ամ, Ամուլ սարի հս-ամ ստորոտին, հայ-անգլ. Geoteam ընկերության ոսկու արդյունահանման ճամբարից մոտ 3 կմ հս, երկու բլուրներով շրջապատված ձորակի հվ-ամ ստորոտին	Հ	6-րդ լր.՝ 5

Ցուցակ Ամուլսարի տարածքի այն հուշարձանների, որոնք ընդգրկված են Վայոց ձորի մարզի պետական ցուցակում

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ մարզ

9.2.1 ԿԵՂՈՒՏ գյուղ

Ընդհանուր համար	Հուշարձանի անվանումը (ըստ ելակետային փաստաթղթի)	Ժամանակը (ըստ ելակետային փաստաթղթի)	Հուշարձանի տեղը, հասցեն (ըստ ելակետային փաստաթղթի)	Հուշարձանի ցուցիչը (ըստ մարզի պետական ցուցակի	Արժեվորումը՝ տեղական / հանրապե-տական
	2	3	4	10	11
1	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՆԵՐՔԻՆ ՁԻՐԱԿ»	13-19 դդ.	գյուղից 1.5 կմ հս-աե, Պուճուր գետի աջ կողմում, քարհանք տանող ճանապարհի երկու կողմում, բարձրադիր մասում	4.	S
2	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՎԵՐԻՆ ՁԻՐԱԿ»	13-19 դդ.	գյուղից 3 կմ հս-աե, Պուճուր գետի վտակի երկու կողմում, դաշտամիջյան ճանապարհից ձախ	6	S

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF ARMENIA

COMMITTEE OF EXPERTS ON
PROTECTION OF THE LAKE SEVAN

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЭКСПЕРТНАЯ КОМИССИЯ ПО
ОХРАНЕ ОЗЕРА СЕВАН

24d, Baghramian Ave., 0019 Yerevan,	0019 ք.Երևան մ.Բաղրամյանի պ.24դ	Республика Армения, Ереван 0019, пр.м.Баграмяна 24д,

№_Ե/09/2012
12.06.2012թ.

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Ա.Հարությունյանին

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
Մուտք № Ե-2200 «12» 06 2012թ.

Ձեր հ.1/33/10738
17.05.2012

Հարգելի պարոն Հարությունյան,

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը ս/թ հունիսի 05-ին հրավիրված նիստում քննության առնելով «Գեթիմ» ՓԲԸ-ի ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի վերաբերյալ փորձաքննական եզրակացությունը, ներկայացնում է փորձագիտական հանձնաժողովի արձանագրությունը:

Առդիր՝ 2 թերթ:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Սովսիսյան

Արձանագրություն № 6

ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» նիստի

05 հունիսի 2012թ. ք.Երևան

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամները լրիվ կազմով:
Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Վ. Մովսիսյանը:

Օրակարգում՝

«ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում սահմանագլխին գտնվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման» աշխատանքային նախագծի քննարկումը (զեկուցող Ա.Թարվերդյան)

Ելույթ ունեցան՝ Վ. Մովսիսյանը, Յու.Ջավադյանը, Ա.Կարախանյանը

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը քննության առնելով "Գեոթիմ" ՓԲԸ "ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման" աշխատանքային նախագիծը, նշում է՝

1. Հանքավայրի լցակույտերը նախատեսվում է 2570-2360մ նիշերի սահմաններում, 735 թ. աղետալի երկրաշարժի էպիկենտրոնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա 40-50մ բարձրությամբ 4 շերտով շուրջ 100մ միջին բարձրությամբ m=1.0 շեպերի թեքությամբ, առանց միջանկյալ բերմաների: Նախագծում չկան շեպերի կայունությունը հիմնավորող հաշվարկներ՝ հաշվի առնելով տարածաշրջանի 10 բալ սեյսմիկ ուժգնությունը:
2. Բացի այդ՝ լցակույտի համար նախատեսված իջույթի հիդրոերկրաբանական առանձնահատկությունների շնորհիվ դիտարկվում են գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, որոնք լցակույտում պարունակվող վտանգավոր բաղադրիչները կտեղափոխեն Ողոտանի գետահունը, այնուհետև Ողոտան-Արփա-Սևան թունելով նաև Սևանա լիճ: Իջույթի սահմաններում զարգացած են ակտիվ սողանքային տեղամասեր, որոնց վրա լցակույտերի բեռնավորումը և հանքավայրում պայթեցման գործընթացները կարող են առավել ակտիվացնել սողանքային երևույթները, հատկապես գարնանային ամիսներին, իրենց անկանխատեսելի հետևանքներով:
3. Նախագծի Radman Associates հատորում նշվում է, որ ռադոնի կոնցենտրացիան գերազանցում է 400 ԲԿ m-3 ներգործության մակարդակը, բայց "Շրջակա միջավայրի

վրա ազդեցության գնահատական" հատորում ոչ մի միջոցառում չի նախատեսված ռադոնի մակարդակը իջեցնելու համար:

4. Նախագծի ՄՄ 631 հաշվետվությունում նշվում է, որ ծրագրի տարածքը հանդիսանում է երկրի հիմնական արոտավայրերից մեկը, մարգագետնային բուսականությամբ, բայց չի նշվում հանքավայրի շահագործման և նրա կոնսերվացումից հետո դրանց օգտագործման հնարավորությունները:
5. Հողային ռեսուրսներին հասցված տնտեսական վնասը գնահատվել է շուրջ 44.6 մլն.դրամ, առանց բացատրության, արդյոք նրա փոխհատուցումը նախատեսված է աշխատանքային նախագծում թե ոչ:

Որոշեցին՝

Հանձնաժողովը ելնելով վերոհիշյալից և առավել ևս հաշվի առնելով, որ ըստ ինտերնետային տվյալների նախատեսվում է տվյալ տարածքում կառուցել հանքաքարի հարստացման ֆաբրիկա, «ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում սահմանագլխին գտնվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման» աշխատանքային նախագծին տալ բացասական եզրակացություն:

Հանձնաժողովի նախագահ **Վ.Մովսիսյան**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» 07 2012 թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 65

Տրված է՝ ***<<Էկո Աուդիտ>> ՍՊԸ***
ք. Երևան, Կոմիտաս 38/2

Գործունեությունը՝ ***<<Գեոթիմ>> ՓԲԸ-ի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի վերաբերյալ***
ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածք

Տնօրեն՝ Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 65

«31» 07 2012թ.

«Էկո Աուդիտ» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեոքիմ» ՓԲԸ-ի Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ

Պատվիրատու՝	«Էկո Աուդիտ» ՍՊԸ
Նախագծող՝	«ՎՀՀ» ՍՊԸ, «Էկո Աուդիտ»ՍՊԸ
Լիազորված անձ՝	Հ. Ավետիսյան, Մ. Առուստամովա
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ
Տեղադրման վայրը՝	ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածք

Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի վարչական սահմաններում: Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան ճյուղավորումների ջրբաժան մասում, 2500-2988մ բացարձակ բարձրության վրա: Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի Տիգրանես տեղամասի պաշարները հաստատված են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Օգտակար հանածոների պաշարների գործակալության կողմից՝ 2009թ փետրվարի 23-ի թիվ 211 որոշմամբ և կազմում են՝ հանքաքար – 18395.7 հազ.տ և մետաղ 16380կգ: 29.09.2009թ «Գեոքիմ» ՓԲ ընկերությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացրել Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի Տիգրանես տեղամասի շահագործման աշխատանքային նախագիծը, որի վերաբերյալ 09.12.2009թ ստացել է թիվ ԲՓ-127 փորձաքննական դրական եզրակացությունը:

2011թ. սեպտեմբերի 16-ի N309 որոշմամբ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալությունը վերահաստատել է Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի Տիգրանես տեղամասի պաշարները՝հանքաքար՝ 56434.5 հազ. տ, ոսկի՝ 52664.0 կգ, արծաթ՝ 210.51 տ:

Նախագիծը կազմվել է համաձայն «Գեոքիմ» ՓԲԸ տեխնիկական առաջադրանքի և էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրված հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի հիման վրա, մինչև 25 տարի գործունեության ժամկետով:

Հանքավայրի մակերեսը (տրամադրված լիցենզիայով) կազմում է 79.8 հա պաշարների հաշվարկման խորությունը վերցվում է 2700մ նիշը, որը և վերցվել է որպես բացահանքի հատակի (ներքին) նիշ:

Հանքային մարմինը մակերևույթում ունի իզոմետրիկ-օվալաձև եզրագիծ, որի երկարությունը 800-1000մ է, իսկ լայնությունը 600-800մ: Հանքային մարմինը հորատանցքերով հետամտվում է մակերևույթից մինչև 100-150մ խորությունը, սակայն պաշարների հաշվարկման ժամանակ ներքին սահմանը վերցվել է 2830մ, այսինքն մոտ 100մ:

Հանքամարմնի տեղադրման պարամետրերը, ապարների ֆիզիկամեխանիկական հատկանիշները թելադրում են հանքավայրի շահագործումը իրականացնել բաց եղանակով, ապարների նախնական փխրեցմամբ:

Արտադրողականությունը ըստ լիցենզիայի կազմում է 2.6 մլն.տ հանքաքար: Ըստ տեխնիկական առաջադրանքի՝ 1-3 տարում 2.6 մլն տ/տարի, 4-6 տարում 4 մլն տ/տարի, 7-ից՝ 5.5 մլն տ/տարի:

Հանքվայրի մշակումը կատարվում է 10մ բարձրությամբ աստիճաններով, վերևից ներքև: Ապարների հանույթաբարձումը իրականացվում է էքսկավատոր-ավտոհնքնաթափ համալիրով (նախագծում բերված է տեխնիկայի ցանկը), լեռնային զանգվածի նախնական փխրեցումով հորատապայթեցման աշխատանքներով:

Որպես պայթեցման միջոց կիրառվում է դետոնացիոն քուղ, էլեկտրաճայթիչներ և տրոտիլի պայթաղյուսիկներ: Պայթեցումը կատարվում է հորատանցքային լիցքերի միջոցով, էլեկտրական կարճ դանդաղեցված, որի դեպքում պայթեցման ազդեցությունը դիտվում է որպես մեկ լիցքի պայթյուն (161կգ):

Լցակույտը տեղադրված է հանքից հյուսիս 4կմ հեռավորության վրա: Ընդհանուր մակերեսը՝ 161 հա, ծավալը՝ 92208.8 հազ.մ^3: Վերին ընդունող հրապարակը տեղադրված է 2570մ նիշի վրա: Վերջում կունենա 50հա մակերես: Ստեղծվում է 2520 մ նիշում՝ 12 հա, 24880մ նիշում՝ 4.3 հա, 2440մ նիշում՝ 4.4 հա մակերեսով դարավանդներ: Ստորին նիշը 2360մ է:

Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների համաձայն գետնաջրերը բացակայում են, հետևաբար հանքավայրի շահագործման պայմաններում ջրահեռացումը իրականացվում է անմիջապես բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումներից առաջացած ջրհոսքերի հեռացման նպատակով:

Ջրահեռացումը իրականացվում է թեք կյուվետների միջոցով կամ ենթարկվում են բնական դրենաժի:

Բացահանքում ջուրն օգտագործվում է տարվա շոգ և չոր եղանակներին աշխատանքային հրապարակների, լցակույտերի և ավտոճանապարհների փոշեճնստեցման նպատակով, հանքանյութի խոնավացման, ինչպես նաև աշխատողների խմելու-տնտեսական կարիքների համար: Խմելու ջուրը նախատեսվում է մատակարարել Գնդեվազ գյուղի ջրատարից: Տեխնիկական ջուրը նախատեսվում է մատակարարել բացահանքի մոտ գտնվող լճակից:

Համաձայն հաշվարկների փոշեճնստեցման, հանքաքարի խոնավացման, խմելու և կենցաղային նպատակների համար ջրօգտագործումը հաշվարկված է 11520, 82500, 864.3 մ^3/տարի համապատասխանաբար: Աշխատողների սպասարկման և կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարաններ:

Համաձայն «Գեոքիմ» ՓԲԸ առաջադրանքի իրականացվել են ուսումնասիրություններ բացահանքի շահագործման փուլում փոշու, պայթեցումների, ռադիացիայի, աղմուկի, հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:

Մթնոլորտային օդի վրա բացահանքի շահագործման գնահատման համար դիտարկվել է երրորդ փուլը՝ 7-րդ տարին, քանի որ շահագործումը իրականացվելու է առավելագույն արտադրողականությամբ:

Ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ արտանետումները պայմանավորված են վառելանյութի այրման արգասիքներով, ինչպես նաև փոշով, որն առաջանում է անվադողերի և ճանապարհի ծածկի շփման և թափքերից փչման և թափման հետևանքով:

Փոշու աղբյուր են հանդիսանում հանման–բեռնման աշխատանքները բացահանքում (հանքաքարի և ծածկաշերտի բեռնում և տեղափոխում, էքսկավատորների, բուլդոզերների և ուրիշ ծանր տեխնիկայի աշխատանքը և այլն), ինչպես նաև հորատանցքերի և պայթեցումների հորատումը:

Փոշու և գազերի (ածխածնի և ազոտի օքսիդներ) համազարկային արտանետումների աղբյուր են ծառայում պայթեցման աշխատանքները: Փոշու և գազերի էմիսիայի տևողությունը պայթեցման աշխատանքների ժամանակ միջինը 10 րոպե է, այդ պատճառով նրանք համարվում են համազարկային և մթնոլորտի աղտոտման մակարդակի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում:

Բացահանքում տեխնիկայի աշխատանքի ընթացքում օգտագործվող յուղերի, կերոսինի, քսանյութերի բնական կորուստը հանդիսանում է ածխաջրածիններով մթնոլորտի աղտոտման աղբյուր:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը շահագործման ժամանակահատվածում հաշվարկվել է անօրգանական փոշի 1522.0 տ/տարի, ածխածնի օքսիդ 257.3 տ/տարի, ցնդող օրգանական միացություններ 36.67 տ/տարի, ազոտի օքսիդներ 884.32 տ/տարի, պինդ մասնիկներ 25.21 տ/տարի, ծծմբի երկօքսիդ 16.71 տ/տարի:

Համաձայն մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների ձպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Համաձայն Wardell Armstrong International-ի հետազոտության հանքարդյունահանման կամ հանքանյութի տեղափոխման ընթացքում փոշու ցրումը լինելու է լոկալ բնույթի՝ ոչ ավել քան 1կմ:

Աղմուկի և վիբրացիայի ազդեցությունը գնահատվել է Wardell Armstrong International և Eddie Jewell Acoustics կազմակերպությունների կողմից կատարվել են հաշվարկներ, որոնց համար հիմք են հանդիսացել Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ձեռնարկով» սահմանված չափանիշները, մշակված ըստ Առողջապահության Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ), «Աղմուկը բնակավայրերում» ձեռնարկով սահմանված ստանդարտները և ՀՀ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջները:

Ըստ այդ հետազոտությունների բոլոր մերձակա բնակավայրերում աղմուկի ակնկալվող մակարդակը գտնվում է նորմերի սահմաններում:

Պայթեցումների ազդեցությունը Ջերմուկի մերձակա աղբյուրների և Կեչուտի ու Սպանդարյանի ջրամբարների վրա իրականացվել է Wardell Armstrong International և Golder Associates կազմակերպությունների կողմից: Պայթուցիկի առավելագույն քանակը ընդմիջումներով հաշվարկված է 44կգ էմուլսիոն նյութ խոնավ փոսորակներում և 161կգ ամոնիումի նիտրատի վառելիքաքսուկային միացություններ:

Բացահանքերին բնորոշ ուղղահայաց պայթեցման համար կանխատեսված մասնիկների առավելագույն արագությունները հաշվարկվել են ցնցումների մարման փորձնական հարաբերակցությունների հիման վրա: Հիմնավորված է, որ պայթեցումները չեն կարող բացասական ազդեցություն ունենալ Սպանդարյանի և Կեչուտի ջրամբարների կառուցվածքային ամբողջականության, ինչպես նաև Ջերմուկի բնական ազբյուրների վրա:

ՀՀ ՀԱԻԿ և ՀՀ ԿԱ ՍԱԿ ՊԿ ուսումնասիրությունների տարածքում ռադիացիոն ֆոնը գտնվում է նորմերի սահմաններում, իսկ Radman Associates կողմից իրականացված ռադիոլոգիական հաշվետվության արդյունքները հաստատումն են, որ բնական ծագման ռադիոակտիվ նյութերից առաջացող հնարավոր մասնագիտական ճառագայթահարման դոզաները գտնվում են միջազգային նորմերի սահմաններում և տարածքի հողերի ռադիացիոն բնական ֆոնը ավելի ցածր է քան Հայաստանի Հանրապետության հողերի միջին ֆոնային մակարդակները: Բնական ծագման ռադիոակտիվ նյութերից առաջացող հնարավոր ճառագայթման դոզաները գտնվում են միջազգային նորմերի սահմաններում:

Համաձայն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի տեղեկանքի առկա հերբարիումային և գրական տվյալների նշված տարածքում գրանցված չեն ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և ոչնչացող բույսերի տեսակներ: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնի հաշվետվության համաձայն Ամուլսարի տարածքի կաթնասունների բազմազանության արդի վիճակի ուսումնասիրման ընթացքում կծղակավոր կենդանիներ չեն գրանցվել:

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, բազմամետաղային հանքերի համար ՍՊԳ-ն կազմում է 500մ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա բնակավայրը գտնվում է առնվազն 4-5 կմ հեռավորության վրա, հատուկ միջոցառումներ ՍՊԳ կազմակերպման նպատակով չեն նախատեսվում:

Վնասակար նյութերի արտանետման հետևանքով տնտեսությանը հասցված վնասը հաշվարկված է 3196489.22 դրամ/տարի: Հողային ռեսուրսների հասցված տնտեսական վնասը հաշվարկված է՝ 44585700 դրամ:

Հանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը մեղմելու և կանխարգելելու նպատակով նախագծում բերված է ազդեցության նվազեցման միջոցառումների ցանկ և դրանց ընթացքի մոնիտորինգի ծրագիր:

Փոշու արտանետումների նվազեցման համար նախատեսվում է տարածքի ջրցանում:

- Քանի որ արտանետումների հիմնական աղբյուրներ են հանդիսանում շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները՝ անհրաժեշտ է խստորեն հետևել նրանց տեխնիկական վիճակին:

- Հորատման աշխատանքները նախատեսվում է կատարել Atlas Copco ROC L8 մակնիշի հորատող հաստոցներով, որոնք մշակված են ժամանակակից տեխնոլոգիաներով, ապահովելով փոշու նվազագույն առաջացում:

Հողային ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնական միջոցառումներից են հանդիսանում շինարարության ժամանակ խախտված տարածքների օգտագործումը, հանքարդյունահանման աշխատանքների ավարտից հետո խախտված հողերի վերակուլտիվացումը:

Հողային շերտի պահպանության համար նախատեսվում են.

- ճավթամթերքների, քայուղերի պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որոնք ունեն անթափանց մակերեսային ջրահեռատարներ և ջրիեղեղային ջրերի հավաքման համար նախատեսված դրենաժային համակարգ,
- թափոնների առանձնացման և պատշաճ պահեստավորման աղբարկղներ, ներառյալ կենցաղային թափոնների համար նախատեսված աղբարկղների տեղադրումը համապատասխան վայրերում,
- կենսաբազմազանության ուսումնասիրության դաշտային ծրագիրը հնարավորություն կտա բացահայտել բույսերի տեսակները նախատեսված առավելագույն ազդեցություն ունեցող տարածքներում, որպեսզի այդ տարածքները հնարավորինս վերականգնվեն և բերվեն իրենց նախաարդյունահանման վիճակին:

Ս.Թ հուլիսի 30-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի են ունեցել հանքավայրի շահագործման նախագծի վերաբերյալ լիազորված անձանց մասնագիտական եզրակացության, համապատասխան պետական մարմինների, ազդակիր համայնքների ղեկավարների և հասարակական կարծիքների հասարակական լսումներ, որի արդյունքում հանձնարարվեց փորձաքննական եզրակացության նախապատրաստման ժամանակ հաշվի առնել հետևյալ *փորձաքննական պահանջները*՝

1. Սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել հանքի փակման ծրագիրը:
2. Հանքի շահագործման ընթացքում շրջակա տարածքներում կազմակերպել
- Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրի որակի մոնիտորինգ,
- շրջակա միջավայրի ճառագայթային մոնիտորինգ:
3. Հանքային իրավունքով ծանրաբեռնված տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների առկայության կամ հայտնաբերման դեպքում առաջնորդվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 26 հոդվածով:
4. Ոսկու կորզման գործարանի տեղադրման հարցում առաջնորդվել <<Սևանա լճի մասին>> ՀՀ օրենքով ամրագրված պահանջներով:
5. Հաշվի առնելով նախատեսվող գործունեության կարևորությունը՝ կապված Սևանա լճի պահպանության, Ջերմուկ առողջարանային քաղաքի, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի, ինչպես նաև տնտեսական վնասի հաշվարկների հետ և կարևորելով միջազգային առաջավոր փորձի օգտագործումը, առաջարկել <<Գեոթիմ>> ՓԲԸ-ին՝ իրականացնել հանքավայրի ընդլայնման նախագծի միջազգային բնապահպանական փորձաքննություն՝ ՀՀ բնապահպանության նախարարության հետ նախօրոք համաձայնեցնելով փորձաքննություն իրականացնող կազմակերպության ընտրությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էկո Աուդիտ» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեոթիմ» ՓԲԸ-ի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննության պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝ Հ. Գրիգորյան

Փորձագետ՝ Ա. Սինասյան